ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

10.01.2024թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա.Գաբրիելյանս, քննության առնելով «Հրաշք այգի» ՍՊԸ-ի՝ ի դեմս ներկայացուցիչ Միքայել Յուրիի Ավետիսյանի ներկայացրած հայցադիմումն ընդդեմ Քաջարանի համայնքապետարանի՝ ՔՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/09 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի Գնահատող հանձնաժողովի 1 և 6 չափաբաժինների մասով «Հրաշք այգի» ՍՊԸ-ին չընտրված մասնակից հայտարարելու /մերժման/ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑԻ

«Հրաշք այգի» ՍՊԸ-ն՝ ի դեմս ներկայացուցիչ Միքայել Յուրիի Ավետիսյանի, 05.01.2024թ.-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ Քաջարանի համայնքապետարանի՝ ՔՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/09 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի Գնահատող հանձնաժողովի 1 և 6 չափաբաժինների մասով «Հրաշք այգի» ՍՊԸ-ին չընտրված մասնակից հայտարարելու /մերժման/ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Գտնում եմ, որ հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ, 234.5.-րդ հոդվածների պահանջներին, հետևաբար այն պետք է ընդունել վարույթ:

Միևնույն ժամանակ դատարանը գտնում է, որ գործը պետք է քննել գրավոր ընթացակարգով և դատական ակտը հրապարակել հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5.-րդ, 234.6.-րդ և 234.9. հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Հրաշք այգի» ՍՊԸ-ի՝ ի դեմս ներկայացուցիչ Միքայել Յուրիի Ավետիսյանի ներկայացրած հայցադիմումն ընդդեմ Քաջարանի համայնքապետարանի՝ ՔՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/09 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի Գնահատող հանձնաժողովի 1 և 6 չափաբաժինների մասով «Հրաշք այգի» ՍՊԸ-ին չընտրված մասնակից հայտարարելու /մերժման/ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ և գործը քննել գրավոր ընթացակարգով:

Գործի քննության արդյունքով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024թ. փետրվարի 21-ին, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում՝ այն դատական տեղեկատվական համակարգում տեղադրելու միջոցով:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **ԱՎԱԳ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**